



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2014 թվականի N 50 - ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի

Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի Օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին»

N 1911-Ն որոշման N 10 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) «1. Եղեգնաձորի տարածաշրջան» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին և 3.2-

րդ կետերով.

«3.1. «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պալիկլինիկական

ծառայությունները, բացառությամբ ունեցեն ծառայության, տեղակայել բժշկական կենտրոնի հիվանդանոցային

մասնաճեղհում: Ազատել և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի

կառավարման վարչությունը հանձնել «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիլինիկական մասնաճյուղի և դրա օգտագործման ու սպասարկման համար առանձնացված հողամասը՝ սահմանելով, որ նշված գործընթացը կիրականացվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չսփառում իրականացնելուց և նշված տարածքը որպես առանձին գույքային միավոր գրանցելուց հետո: Բաժնետոմսերի ձեռքբերման և մարման միջոցով նվազեցնել «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը:

3.2. 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կրճատել «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության մահեակալների թիվը՝ 50-ից հասցնելով 45-ի: «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ինֆեկցիոն ծառայությունը սեղափոխել «Վայֆի բուժական միավորում» փակ բաժնետիրական ընկերություն: «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գույքի կազմից օրենքով սահմանված կարգով առանձնացնել ինֆեկցիոն ծառայության գույքը և այն սեփականության իրավունքով՝ սահմանված կարգով հանձնել «Վայֆի բուժական միավորում» փակ բաժնետիրական ընկերությանը:».

2) «Ու. Վայֆի տարածաշրջան» բաժնում՝

ա. «100-ով և կկազմի 90 մահեակալ» բառերը փոխարինել «105-ով և կկազմի 85 մահեակալ»

բառերով,

բ. «9182 ֆառ. մետր» բառերը փոխարինել «14443.17 ֆառ. մետր» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում կատարել «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական մասնաճյուղի և դրա օգտագործման ու սպասարկման համար առանձնացված հողամասի չափազորում և, որպես առանձին գույքային միավոր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային իրավունքների պետական գրանցում:

2) մինչև 2014 թվականի օգոստոսի 31-ը ավարտել Սույն որոշմամբ նախատեսված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի ատոլջապահության համակարգի Օպտիմալացման ծրագրից բխող՝ սույն որոշմամբ նախատեսված ատոլջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության ֆալաֆացիական Օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի պահանջներին համապատասխան:

3) մինչև 2014 թվականի սեպտեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության ատոլջապահության նախարարություն ներկայացնել հաշվետվություն Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի՝ սույն որոշմամբ նախատեսված ատոլջապահության համակարգի Օպտիմալացման ծրագրի իրականացման գործընթացի մասին:

3. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված չափազորման և գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվում են «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ կերպով հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2014 թ. հունվարի 29

Երևան

